ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 03 >> հոկտեմբերի 2012թ. N 70

ք. Արմավիր

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ոստիկանության քննչական գլխավոր վարչության Արմավիրի մարզային քննչական բաժնի պետի 2012 թվականի հուլիսի 31-ի N7/36-18-2736 և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ գյուղական համայնքի ղեկավարի 2012 թվականի սեպտեմբերի 25-ի թիվ 99 գրությունները Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տալվորիկ և Տանձուտ գյուղական համայնքներում հողերի օգտագործման բնագավառում առաջադրված հարցերի ուսումնասիրության նպատակով.

կարգադրում եմ՝

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին (Հ. Ալեքսանյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել 15-օրյա ժամկետում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
3. Հանձնաժողովին (Հ. Ալեքսանյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներին մասնակից դարձնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տալվորիկ և Տանձուտ գյուղական համայնքների ղեկավարներին, քաղաքացիներ Մ. Ավետիսյանին, Կ. Խաչատրյանին, Մ. Հունանյանին և համապատասխան ջրային տնտեսությունների ներկայացուցիչներին (համաձայնությամբ):
4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետին (Վ. Մկրտչյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
5. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի տեղակալ Դ. Սամսոնյանին:
6. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
2012 թվականի հոկտեմբերի 03-ի
N--- կարգադրության

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝

Հ. Ալեքսանյան -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության պետ.

Անդամներ՝

Յու. Մանվելյան -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի իրավաբական բաժնի պետ.

Գ. Գևորգյան -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՏԻ և համայնքային ծառայության հարցերի բաժնի գլխավոր մասնագետ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Փ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**